

ամենէն խորհրդաւոր եւ արժանաւոր յիշատակութիւն մը, պիտի կատարէ իր պարտքը անոնց նկատմամբ ալ, որոնք, աշխարհական բլլան կամ եկեղեցական, իր փառքն ու պատիւը պահելու համար գիտակցութեամբ, անկեղծութեամբ եւ նախանձախնդրութեամբ կ'աշխատին:

Արդի Խնամակալութիւնը՝ տարակոյս չկայ որ գործունէութեան օրինակելի եւ անջնջելի հետք մը պիտի թողը իր պաշտօնին այն դժին վրայ, որուն սկիզբները, իր եկեղեցական եւ կրթական մեծագործութիւններուն մէջ կեցած է ԿՈՒՆՏ:

### Ե Ր Գ Չ Ո Ր Ր Ո Ր Գ

Որ համառօտէ՝ զվէպ ինչ միջարկեալ,  
Յորում երեւին Սորգոյի հրմայեալ,  
Չանք եւ ախտամբ՝ հընար ճարակալ,  
Յօգուտ մեր ազգի եւ Հօրն հալածեալ:

Եւ արդ՝ ազգ Յունաց՝ տոչորեալ խեթիւ,  
Կիզիւր նախանձու՝ ի գիշեր՝ ւ ի տիւ,  
Աւ վայելութեան՝ զոր ունէին հազիւ  
Հայք յԵրուսաղէմ՝ երկնային շնորհիւ:

Ուստի նենգութեամբ՝ եւ զըրպարտ բանիւ,  
Որպէս յայլ նըւազ՝ ոսկեով եւ ջանիւ,  
Ի Սուրբ Յակոբայ վանեալ զՀայոս գանիւ,  
Հաճել փութային՝ զայլազգիս սերտիւ:

ՅԵրուսաղէմ՝ Սուրբ՝ լուրս եհաս տոմսիւ,  
Գրիգոր Պատրիարզ՝ հանդերձ իւր Ուխտիւ  
Պաշարեալ լինէր՝ ապշալիր ահիւ,  
'Ի անտի ի Պօլիս՝ ժամանէր գանձիւ:

կայ կ'ըլան: Այս առթիւ քարոզ ալ կը խօսուի: Երկու տարիէ ի վեր ինձի վեճակեցաւ այս հանդէսին նախագահելու եւ խօսելու բախտը: